Հայկական գիտահետազոտական համգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7852

…ՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

633.46
Ծ-60

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ:

# Ծ Խ Ա Խ Ո Տ Ի
## ՏՆԿԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ
## Յ Ե Վ
## ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1931

2002

1011



# ՄԱՍՍԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՈՒԺԵՂ ԼԾԱԿ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## ԱՄԵՆ ՄԻ ԿՈԼԽՈԶՆԻԿ ՊԵՏՔ Ե ՏԻՐԱՊԵՏԵ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

633.46
Ծ-49

*Սոցիալիստական շինարարության պայմաններում ծխախոտագործության զարգացումը հսկայական նշանակություն ունի։ Ծխախոտը շատ յեկամտաբեր կուլտուրա յե և քիչ դեր չի խաղում մեր յերկրի բյուջեյում։*

*Ներկա մոմենտում սովխոզների ու կոլխոզների առաջ դրված ե մի մարտական խնդիր —100 տոկոսով ապահովել մեր ծխախոտագործական արդյունաբերությունը հումույթով։*

*Այս խնդիրն իրագործելու համար սովխոզներն ու կոլխոզները պետք ե հաշվի առնեն այն բոլոր մոմենտները, վորոնցից կախված ե արտադրական պլանների հաջող կատարումը։*

*Առաջինը, վոր վճռական նշանակություն ունի ծխախոտագործական արտադրության մեջ, դա ծխախոտի տնկարաններում տնտեսության կազմակերպումն ե*

32268-Ա.Վ.

Սովխոզային ու կոլխոզային շինարարության պրակտիկայից հայտնի յե, վոր այն սխալները, վորոնք թույլ են տրվել տնկարանի տնտեսությունը կազմակերպելիս, բացասական ազդեցություն են ունեցել ծխախոտատունկի պլանների կատարման վրա։

Ահա՛ թե ինչու սովխոզներն ու կոլխոզները պետք է շատ մեծ ուշադրություն դարձնեն տնկարանի տեղի ընտրության վրա։

## Ի՞ՆՉՊԻՍԻ ՏՆԿԱՐԱՆ ՊԻՏԻ ԸՆՏՐԵԼ

Սովխոզային ու կոլխոզային տնտեսության ծխախոտի տնկարանը պետք է համապատասխանե այն բոլոր պահանջներին, վորոնք առաջադրում է տնկարանի տնտեսության առանձին պրոցեսների մեքենայացման այժմյան աստիճանը, որինակ, բուսահողի (պերեգնոյ) ցրման ու ցելավորման մեքենայացումը, ցանքսի, ջրամատակարարման և ջերմոցների վոռոգման մեքենայացումը։

Տնկարանի տնտեսության պրոցեսների մեքենայացումը պահանջում է, վորպեսզի ջերմոցների տարածությունը գտնվի մի տեղում։ Կարելի յե ջերմոցները սարքել նաև յերկու-յերեք տեղում, բայց միայն այն դեպքում, յեթե դա պահանջվում է ջրի տեղերի դիրքը և նկատի առնելով, կամ թե մեծ տարածություն ծխախոտ տնկելիս անհրաժեշտ է դառնում տնկարանի մոտիկությունն այդ տարածության։



# I ՏՆԿԱՐԱՆԻ ՏԵՂԸ ՎՈՐՈՇԵԼԻՍ Ի՞ՆՉ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԵՏՔ Ե ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼ

## ա) ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Տնկարանի տնտեսության ամենակարևոր պայմանն է ջրով լիովին ապահովված լինելը, ուստի այդ տնտեսությունը պետք է գտնվի ջրերին մոտիկ, այնպես վոր տունկի աճեցման ամբողջ ժամանակ ջուր մատակարարվի։

## բ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՔԱՄԻՆԵՐԻՑ

Վոչ պակաս կարևոր պայման է հանդիսանում տնկարանի պաշտպանված լինելը՝ քամիներից՝ յեղեգնից կամ ցախերից շինված ցանկապատով։ Տնկարանի ներսում նույնպես պետք է լինեն ցանկապատեր, վորով տնկարանը պիտի բաժանվի մի քանի առանձին վանդակների։

Յեթե տնկարանը լինում է անտառից ու թփերից մաքրված տեղերում, ապա նրա շուրջը պիտի թողնվի անտառի վորոշ շերտ, քամիներից պաշտպանելու համար։ Այնտեղ, վորտեղ ուժեղ քամիներ են փչում, այդպիսի շերտ պիտի թողնվի նաև տնկարանի ներսում։ Անտառաշերտերի ուղղությունը պիտի համապատասխանի տվյալ վայրում տիրող քամիներին։

## գ) ԱՐԵՎԻ ԼՈՒՅՍԸ

Տնկարանի համար նշված տեղը պետք է ամբողջ որը լուսավորված լինի արևով, վորն անհրաժեշտ է

Սովխոզային ու կոլխոզային շինարարության պրակտիկայից հայտնի յե, վոր այն սխալները, վորոնք թույլ են տրվել տնկարանի տնտեսությունը կազմակերպելիս, բացասական ազդեցություն են ունեցել ծխախոտատունկի պլանների կատարման վրա։

Ահա թե ինչու սովխոզներն ու կոլխոզները պետք ե շատ մեծ ուշադրություն դարձնեն տնկարանի տեղի ընտրության վրա։

## Ի՞ՆՉՊԻՍԻ ՏՆԿԱՐԱՆ ՊԻՏԻ ԸՆՏՐԵԼ

Սովխոզային ու կոլխոզային տնտեսության ծխախոտի տնկարանը պետք ե համապատասխանի այն բոլոր պահանջներին, վորոնք առաջադրում ե տնկարանի տնտեսության առանձին պրոցեսների մեքենայացման այժմյան աստիճանը, որինակ, բուսահողի (պերեգնոյ) ցրման ու ցելավորման մեքենայացումը, ցանքսի, ջրամատակարարման և ջերմոցների վոռոգման մեքենայացումը։

Տնկարանի տնտեսության պրոցեսների մեքենայացումը պահանջում ե, վորպեսզի ջերմոցների տարածությունը գտնվի մի տեղում։ Կարելի յե ջերմոցները սարքել նաև յերկու-յերեք տեղում, բայց միայն այն դեպքում, յեթե դա պահանջվում ե ջրի տեղերի դիրքը ի նկատի առնելով, կամ թե մեծ տարածություն ծխախոտ տնկելիս անհրաժեշտ ե դառնում տնկարանի մոտիկությունն այդ տարածության։



## I ՏՆԿԱՐԱՆԻ ՏԵՂԸ ՎՈՐՈՇԵԼԻՍ Ի՞ՆՉ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԵՏՔ Ե Ի ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼ

### ա) ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Տնկարանի տնտեսության ամենակարևոր պայմանն ե ջրով լիովին ապահովված լինելը, ուստի այդ տնտեսությունը պետք ե գտնվի ջրերին մոտիկ, այնպես վոր տունկի աճեցման ամբողջ ժամանակ ջուր մատակարարվի։

### բ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՔԱՄԻՆԵՐԻՑ

Վոչ պակաս կարևոր պայման ե հանդիսանում տնկարանի պաշտպանված լինելը՝ քամիներից՝ յեղեգնից կամ ցախերից շինված ցանկապատով։ Տնկարանի ներսում նույնպես պետք ե լինեն ցանկապատեր, վորով տնկարանը պիտի բաժանվի մի քանի առանձին վանդակների։

Յեթե տնկարանը լինում ե անտառից ու թփերից մաքրված տեղերում, ապա նրա շուրջը պիտի թողնվի անտառի վորոշ շերտ, քամիներից պաշտպանելու համար։ Այնտեղ, վորտեղ ուժեղ քամիներ են փչում, այդպիսի շերտ պիտի թողնվի նաև տնկարանի ներսում։ Անտառաշերտերի ուղղությունը պիտի համապատասխանի տվյալ վայրում տիրող քամիներին։

### գ) ԱՐԵՎԻ ԼՈՒՅՍԸ

Տնկարանի համար նշված տեղը պետք ե ամբողջ որը լուսավորված լինի արևով, վորն անհրաժեշտ ե

ոչ միայն որպես տնկարանի համար լույսի աղբյուր, այլ և որպես զանազան վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու միջոց:

## 2) ՏԵՂԻ ԴԻՐՔԸ

Տնկարանին հատկացվող տեղը պետք է մի փոքր թեք լինի։ Իսկ յեթե տնկարանը տեղավորվում է բավական զգալի թեքվածք ունեցող տեղում, ապա գերադասելի յե, որ թեքվածքը լինի դեպի հարավ կամ արևմուտք։ Հողի տակի ջուրը չպիտի մոտիկ լինի նրա մակերևույթին։

## Դ) ԻՆՉՊԻՍԻ ՀՈՂ Է ՊԵՏՔ ՏՆԿԱՐԱՆԻՆ

Տնկարանի համար ամենապիտանականը այն հողն է, որը լինում է մի փոքր կավախառն, ավազախառն, կամ գետային տիղմերով ծածկված։ Ծանր հողերը քիչ են օգտավետ, որովհետև դանդաղ են տաքանում և դժվարությամբ են ջուրն անցկացնում։ Բացի դրանից, այդպիսի հողերը պահանջում են մեծ քանակությամբ աղբային բուսահող, իսկ այս հանգամանքն արագ զարգացող ծխախոտագործության պայմաններում ունի մեծ նշանակություն, յերբ պահանջվում է խոշոր քանակությամբ բուսահող։

Տնկարանի տեղն ընտրելիս պետք է խուսափել մոլախոտերով սաստիկ աղտոտված տարածություններից, քանի որ մոլախոտերը ավելացնում են ծախսերը՝ տնկարանը մշակելու ժամանակ։

Սովխոզներն ու կոլխոզները, տնկարանի տեղն ընտրելիս, պետք է կատարեն այս բոլոր պայմանները,



որով հնարավոր կլինի, նաև մյուս պայմանները գործադրելով, առողջ և լավ տունկ ունենալ։

## ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ջուրը հանդիսանում է հիմնական գործոն, որից կախված է տնկարանի բարորությունը։ Այս պատճառով ջրամատակարարման գործը կազմակերպելիս պետք է խստորեն հաշվել ջրի կարիքը ամբողջ տունկի ընթացքում։

Հաշվելով տունկի ժամանակամիջոցը 90 օր, 200 հեկտար տարածությամբ ծխախոտի համար կպահանջվի մինչև 6 միլիոն լիտր (500,000 դույլ) ջուր։ Իսկ յեթե ավելացնենք ջրի այն քանակությունը, որը պահանջվում է 200 հեկտար ծխախոտ տնկելու համար, 1 հեկտարին 60 տակառ (480 լիտր) ջրի հաշվով, իսկ ընդամենը 5,760,000 լիտր,—ապա տնկարանի և ծխախոտատունկի համար ջրի պաշարը կլինի 11, 760,000 լիտր (980,000 դույլ)։ Այն դեպքերում, յերբ տնկարանը տեղավորված է գետի մոտ, ջրի հարցը լուծված է։ Իսկ յեթե կարիք է լինում արհեստականորեն ջուր ստանալ (ջրի փոսեր, ջրհորներ), ապա անհրաժեշտ է խստությամբ պահպանել վերը հիշված հաշիվը։ Ջրի փոսերը պետք է այնպես կառուցվեն, որպեսզի հնարավոր լինի օգտագործել ուշ աշնան մթնոլորտային տեղումներն, ինչպես նաև մոտակա աղբյուրներն ու հոսող առվակները։ Սովխոզային ու կոլխոզային շինարարության պրակտիկայից հայտնի յե, թե որքան մեծ է ջրամատակարարման նշանակությունը խոշոր տնկարանի տնտեսության համար։ Ջրի պակասությունը խիստ իջեցնում է ծխախոտի քանակն ու որակը։ Սովխոզներն ու կոլխոզները պետք է հաշվի

53812 7852

առնեն այս հանգամանքները և այս տարի յեղած սխալները թույլ չտան տնկարանների կազմակերպման առաջին կամպանիայում։

Միշտ կազմակերպված ջրամատակարարումը հնարավորություն կտա՝ սովխոզներին ու կոլխոզներին՝ տնկարանները միշտ ապահովել ջրով, որով կբարձրանա ծխախոտի քանակն ու որակը։

4013

ՀՀ Ազգային գրադարան
NL0080402

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ"

Ростов н-Д. Газетно-книжн. тип. СККПО.
Уполкрайлита № 4340. Ст.-ф. Б6 125x176. Зак. № 4594—1000